



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

08 ապրիլի 2022 թվականի թիվ 51-Ա

ք. Երևան

#### «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2022 թվականի փետրվարի 28-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 8 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ դիստրիբյուտոր) գործել է առանց «Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը ներառող ծանուցում ներկայացնելու՝ խախտելով Օրենքի դրույթի պահանջը:

Հանձնաժողովը իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս պարզել է հետևյալը.

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը Հանձնաժողով 2022 թվականի փետրվարի 08-ի թիվ 161/22-11 գրությամբ ներկայացրել է տեղեկություն՝ իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին: Նշված ցանցում ներառված էր նաև «Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը և որպես իրավատեր նշված է «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը: «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից ներկայացվել է նաև իր և դիստրիբյուտորի միջև 2021 թվականի մայիսի 01-ին կնքված թիվ AM-ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ 21 պայմանագրի և 2021 թվականի դեկտեմբերի 30-ին՝ թիվ AM-ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ 21-1 և 2022 թվականի փետրվարի 01-ին թիվ՝ AM-ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ 21-2 կնքված համաձայնագրերի պատճենները:

«Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը վերահաղորդման իրավունքով փոխանցվել է «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությանը 2022 թվականի փետրվարի 01-ի թիվ AM-ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ 21-2 կնքված համաձայնագրի հիման վրա, սակայն դիստրիբյուտորը 2022 թվականի փետրվարի 01-ի դրությամբ նշված տեսալսողական ծրագիրը ներառող տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցում

Հանձնաժողով չէր ներկայացրել: Նշված տեսալսողական ծրագրի ծանուցումը Հանձնաժողով ներկայացվել է 2022 թվականի փետրվարի 04-ին և «Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը ներառող ծանուցումը Հանձնաժողովի կողմից հաստատվել է 2022 թվականի փետրվարի 24-ի թիվ 26-Ա որոշմամբ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2022 թվականի փետրվարի 28-ին դիստրիբյուտորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի մարտի 01-ին ծանուցել է դիստրիբյուտորին (այս ծանուցման մեջ նշված էր «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության կողմից առանց նշված տեսալսողական ծրագիրը ներառող ծանուցում ներկայացնելու գործունեություն իրականացնելու մասին) և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում դիստրիբյուտորը 2022 թվականի մարտի 07-ին Հանձնաժողով հասցեագրած իր պարզաբանման մեջ դիստրիբյուտորը նշել է հետևյալը.

*Ընկերության և «Первый ТВЧ» ОА միջև 19.12.2021թ. կնքված համաձայնագրով Ընկերությունը ձեռք է բերել «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի դիստրիբյուցիայի իրավունք:*

*Ընկերությունը 04.02.2022թ. Հանձնաժողովին ներկայացրել է նշված տեսալսողական ծրագրի հաստատման ծանուցում,որը Հանձնաժողովի 24.02.2022թ. թիվ 26-Ա որոշմամբ հաստատվել է:*

*Համաձայն Հանձնաժողովի 24.02.2022թ. թիվ 26-Ա որոշման՝ Հանձնաժողովը հաստատել է «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի ծանուցումն ըստ սովյալ տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի:*

*Համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 10-րդ կետի՝*

*10) տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր՝ Հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա օպերատորին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ:*

*Վերոգրյալից հետևում է, որ անձը ձեռք է բերում դիստրիբյուտորի կարգավիճակ հեռարձակողի հետ կնքված պայմանագրի ուժով: Պայմանագրի կնքման պահից էլ վերջինս հանդիսանում է պայմանագրում ներառված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր:*

*Այսպիսով, սույն դեպքում, Ընկերությունը դարձել է «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի դիստրիբյուտոր 01.01.2022թ.-ին:*

**Նույն օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝**

*1. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը գործում է օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:*

Հիշյալ իրավական դրույթից բխում է, որ դիստրիբյուտորի գործունեությունը սկսվում է համապատասխան ծանուցում ներկայացնելուց հետո:

Սույն դեպքում ինչպես վերը նշվեց Ընկերությունը ծանուցումը ներկայացրել է 04.02.2022 թվականին, իսկ Հանձնաժողովն այն հաստատել է 24.02.2022 թվականին: Ընկերությունը հիշատակված տեսալսողական ծրագրի գործունեությունն առերևույթ պետք է սկսեր 04.02.2022 թվականին, սակայն հաշվի առնելով, որ Հանձնաժողովը հաստատել է տեսալսողական ծրագիրը՝ համաձայն իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի, իսկ իրավատիրոջ հետ պայմանագիրը կնքվել է 01.01.2022 թվականին, ուստի Ընկերության կողմից 01.01.2022 թվականին կնքված պայմանագիրը համարվում է իրավաչափ: Այսինքն, նշվածից հետևում է, որ հենց Հանձնաժողովն է հաստատել այն հանգամանքը, որ Ընկերությունն իրավունք ունի գործելու սկսած իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի ամսաթվից:

Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ Ընկերության գործունեությունը՝ որպես «Капитан Фантастика» տեսալսողական ծրագրի դիստրիբյուտոր, բխում է հենց Հանձնաժողովի 24.02.2022թ. թիվ 26-Ա որոշումից, ուստի վերջինիս գործողություններում առկա չէ որևէ օրենսդրական պահանջի խախտում:

Վերոգրյալով պայմանավորված դիստրիբյուտորը խնդրել է կարճել իրենց նկատմամբ հարուցված վարչական վարույթը:

Վարչական վարույթի իրականացման ընթացքում Հանձնաժողովի կողմից պարզվել է նաև հետևյալը.

«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊ ընկերությունը 2022 թվականի փետրվարի 11-ի գրությամբ Հանձնաժողով է ներկայացրել տեղեկություն՝ իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին: Նշված ցանկում ներառված էր նաև «Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը և որպես իրավատեր նշված է «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությունը:

«ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊ ընկերության կողմից ներկայացվել է նաև իր և դիստրիբյուտորի միջև կնքված թիվ AM-Իքս-Թիվի 21 պայմանագրի՝ 2021 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված թիվ AM- Իքս-Թիվի 21-2 և 2022 թվականի փետրվարի 07-ին կնքված թիվ AM-Իքս-Թիվի 21-3 համաձայնագրերի պատճենները:

«Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը վերահաղորդման իրավունքով փոխանցվել է «ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊ ընկերությունը 2022 թվականի փետրվարի 07-ի կնքված թիվ AM-Իքս-Թիվի 21-3 համաձայնագրի հիման վրա (համաձայնագրի գործողության ժամկետը նշված է՝ 01.02.2022-31.12.2022թթ.), սակայն դիստրիբյուտորը 2022 թվականի փետրվարի 01-ի դրությամբ նշված տեսալսողական ծրագիրը ներառող տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցում Հանձնաժողով չէր ներկայացրել: Ինչպես արդեն արձանագրվել է՝ նշված տեսալսողական ծրագրի ծանուցումը Հանձնաժողով ներկայացվել է 2022 թվականի փետրվարի 04-ին և «Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը ներառող ծանուցումը Հանձնաժողովի կողմից հաստատվել է 2022 թվականի փետրվարի 24-ի թիվ 26-Ա որոշմամբ:

Ի լրումն 2022 թվականի մարտի 01-ի ծանուցմանը՝ 2022 թվականի մարտի 29-ին ևս մեկ գրություն է հասցեագրվել դիստրիբյուտորին (գրությամբ նշված էր «ԻՔՍ-

ԹԻՎԻ» ՄՊ ընկերության կողմից առանց նշված տեսալսողական ծրագիրը ներառող ծանուցում ներկայացնելու գործունեությունն իրականացնելու մասին): Ի պատասխան Հանձնաժողովի այս գրությանը 2022 թվականի ապրիլի 05-ին դիստրիբյուտորը կրկին անգամ ներկայացրել է իր իրավական դիրքորոշումը (հղում տալով 2022 թվականի մարտի 07-ին Հանձնաժողով հասցեագրած իր պարզաբանմանը և կրկին անգամ ներկայացնելով իր իրավական դիրքորոշումն այս հարցի կապակցությամբ) և դրանով պայմանավորված խնդրել է կարճել վարչական վարույթը:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝

«2. Սույն օրենքը սահմանում է տեսալսողական մեդիաձառայություն մատուցողների և օպերատորների կարգավիճակը, կանոնակարգում է հեղինակագործան, լիցենզավորման, ծանուցումների ներկայացման կարգը, սույն օրենքի կարգավորման առարկա հանդիսացող սուբյեկտների իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը, գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները»:

Իսկ 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ **կարգավորող պետական մարմին**՝ անկախ պետական մարմին, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է Հեռարձակողների, օպերատորների և տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեությունը:

Համաձայն Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

Վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի յուրաքանչյուր փոփոխության վերաբերյալ ցանցային օպերատորը տեղեկացնում է կարգավորող պետական մարմին:

Օրենքի 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ցանցային օպերատորները կարգավորող պետական մարմին տեղեկություն են ներկայացնում իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում է.

1. Տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորը գործում է օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:

2. Յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ ներկայացվում է ծանուցում:

Իսկ նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ Կարգավորող պետական մարմինը ծանուցումը հաստատում է 20-օրյա ժամկետում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի նյութերը և առաջնորդվելով ինչպես գործում առկա, այնպես էլ ներկայացված ապացույցներով, ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ ղեկավարվելով Օրենքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և 60-րդ հոդվածի 8-րդ մասի դրույթներով՝ ցանցային օպերատորներ՝ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ և «ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊ ընկերությունները Հանձնաժողով ներկայացրել են տեղեկություններ՝ իրենց ցանցում վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի մասին:

Հանձնաժողովը որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացնելիս ուսումնասիրել է ցանցային օպերատորների կողմից Հանձնաժողով ներկայացված վերահաղորդվող տեսալսողական ծրագրերի ցանկերը, ուսումնասիրել է ցանցային օպերատորների և դիստրիբյուտորի միջև կնքված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման պայմանագրերը և համաձայնագրերը: Այդ աշխատանքները իրականացնելիս՝ համադրության արդյունքում արձանագրվել է, որ ցանցային օպերատորներ՝ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ և «ԻՔՍ-ԹԻՎԻ» ՍՊ ընկերությունները դիստրիբյուտորի հետ կնքված վերահաղորդման պայմանագրերի համաձայն 2022 թվականի փետրվարի 01-ից իրավունք են ստացել վերահաղորդելու «Капитан Фантастика» տեսալսողական ծրագիրը և այդ տեսալսողական ծրագիրը ներառված է վերջիններիս կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկերում:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացված փաստերը, որոնք համադրվել են ցանցային օպերատորների կողմից ներկայացված տեսալսողական ծրագրերի ցանկին և պարզվել է, որ դիստրիբյուտորն իր գործունեությունն իրականացնում է՝ խախտելով Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության արդյունքում ամրագրում ենք, որ Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող անձի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում գործել օրենսդրության համաձայն Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո, իսկ համաձայն նույն հոդվածի 2-րդ մասի՝ յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ նույնպես Հանձնաժողով ներկայացնել ծանուցում:

Փաստում ենք նաև, որ Օրենքի գործողությունը Հայաստանի Հանրապետությունում տարածվում է տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների վրա (Օրենքի 1-ին հոդված 4-րդ մաս) և դիստրիբյուտորը հանդիսանալով ցանցային օպերատորներին տարածման նպատակով տեսալսողական ծրագրեր տրամադրող իրավաբանական անձ, պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Դիստրիբյուտը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և դիստրիբյուտորը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում դիստրիբյուտորը պարտավոր էր պահպանել Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի պահանջը:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում դիստրիբյուտորի կողմից ներկայացված բացատրությունների ուսումնասիրման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն, քանի որ Օրենքով դիստրիբյուտորի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում գործել Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո միայն, իսկ տվյալ դեպքերում դիստրիբյուտորը չի կատարել Օրենքի պահանջը: Եվ դիստրիբյուտորի այն պարզաբանումը, որ իրենց կողմից 04.02.2022 թվականին ներկայացված ծանուցումը, որը Հանձնաժողովի կողմից հաստատվել է 24.02.2022 թվականին, ուստի դիստրիբյուտորը հիշատակված տեսալսողական ծրագրի գործունեությունը ճիշտ է, առերևույթ պետք է սկսեր 04.02.2022 թվականին, սակայն հաշվի առնելով, որ Հանձնաժողովը հաստատել է տեսալսողական ծրագիրը՝ համաձայն իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի (իսկ իրավատիրոջ հետ պայմանագիրը կնքվել է 01.01.2022 թվականին), ուստի դիստրիբյուտորի կողմից 01.01.2022 թվականին կնքված պայմանագիրը համարվում է իրավաչափ: Այսինքն, ըստ դիստրիբյուտորի եզրակացման հետևում է, որ Հանձնաժողովը հենց ինքն է հաստատել այն հանգամանքը, որ դիստրիբյուտորն իրավունք ունի գործելու սկսած իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի ամսաթվից:

Ելնելով վերը նշվածից, կրկին նշենք, որ այստեղ խոսքը չի գնում իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի իրավաչափ լինելուն և դրանից բխող դիստրիբյուտորի այն սխալ եզրակացությանը՝ Հանձնաժողովը հաստատելով տեսալսողական ծրագիրը դիստրիբյուտորին իրավունք է վերապահում գործելու սկսած իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի ամսաթվից: Հայաստանի Հանրապետության տարածքում տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կարգավիճակ ունեցող ցանկացած անձ կարող է գործել օրենսդրության համաձայն Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո միայն, այլ ոչ թե իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի օրվանից:

Այսպիսով, դիստրիբյուտորի բացատրությունները հիմնավոր և բավարար հիմք չեն, իրավախախտման փաստը բացառելու և դիստրիբյուտորի նկատմամբ օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն չկիրառելու համար: Ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ խախտվել է Օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը և դիստրիբյուտորի կողմից թույլ է տրվել իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 25-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագործման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 25-րդ մասը սահմանում է.

«25. Առանց սույն օրենքի 54-րդ հոդվածով սահմանված ծանուցման գործունեություն իրականացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 54-րդ հոդվածի 1-ին մասով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 25-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԱՄԵԴԻԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

08 ապրիլի 2022թ.  
ք. Երևան